

808 իրաւաբանական ևայլն: Բայտ ազգութեան, դրանցից 425 հայեր, 230—յոյն, 72—հրէաներ, 11 բոլգարներ և մնացածը մանմեղական:

1892-ից սկսած կայ վաճառականական դպրոց, որ այժմ ունի 87 ուսանող: 1881 թւից իվեր կայ գիւղատնտեսական դըպրոց և ունի այժմ 410 ուսանող, 1774 թւին հիմնւած է մասնկավարժական կուրսեր կանանց համար. կուրսերը մինչև այժմ աւարտել են 800 վարժուհիներ. այժմ կան 207 ուսանողուհիներ: Կան նաև երեք գիւղատնտեսական դպրոցներ կանանց համար:

### ՀԱՅ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400 ԱՄԵԱԿԸ:—

« Կովկ. Հ, Հրատարակչական ընկերութիւնը որոշել է մասնակցնել հայկական տպագր. 400-ամեակի հանդէսներին հետեւալ ձեւով: 1. Հրատարակել տպագրական արևստի պատկերապարդ պատմութիւնը, 2. կազմակերպել հայ մամուլի արտայայտութիւնների շարժական ցուցանանդէս, 3. հրատարակել մի յորելեանական ժողովածու, հոգեհանգիստ կատարել մեռած տպարանատէրերի համար: 4. կազմակերպել դասախոսութիւններ և հիմնել գրական ֆոնդ, 5. յորելեանի յիշատակի դրոշմ պատրաստել:

« Պետերբուրգի հայ գաղութը՝ ուշադրութեան առնելով հայոց պատմագրութեան և հայագիտութեան խեղճ վիճակն ու մեծ կարևորութիւնը՝ խորհակցութիւն ունեցաւ հայկ. տպագր. 400-ամեակին նախաձեռնել հիմնելու հայոց պատմագրութեան և հայագիտութեան ազգային ֆոնդ, որի նպատակը լինելու է.

Հաւաքել, թարգմանել, ուսումնասիրել և հրատարակել.

1) Հայկական, Յունական, Հոռվմէական, Ասորական, Պարսկական, Արաբական, Վրացական Ռուսական և այլ ազգերի պատմագիրների տեղեկութիւնները հայ ազգի մասին:

2) Ռուսական, Տաճկական, Պարսկական և այլ տէրութիւնների պետական

գիւղանատներում—արխիւներում գտնւող հայոց պատմ. վերաբերեալ նիւթերն ու գոկումինտները:

3) Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթուղիկոսութեան և Սըսի ու Ախթամարի կաթողիկոսարանների, Պոլսի ու Երուսաղէմի պատրիարքարանների, այլ և Հռովմի վատիկանի և այլ հոգենոր իշխանութիւնների արխիւնների հայոց պատմ. վերաբերեալ գոկումինտներն ու նիւթերը:

4) Էջմիածնի, Վենետիկի, Վիեննայի, Պետերբուրգի, Բերլինի, Փարիզի, Լոնդոնի և այլ տեղերի թանգարանների հայոց պատմ. վերաբերեալ նիւթերն ու ձեռագիրները և Հայոց վանքերի ու հիշատակարանների արձանագրութիւնները:

5) Հայոց լեզւի, լրօնի, հին ու նոր, բանաւոր և գրաւոր գրականութեան, երաժշտութեան, նկարչութեան, ճարտարապետութեան և այլ արևոտների վերաբերեալ նիւթերն և ուսումնասիրութիւնները:

6) Լայն ծաւալ տալ պեղումներին և հրատարակել նրանց արդիւնքներն ու հետազոտութիւնները:

7) Հաւաքել Հայոց և օտար մամուլի մէջ եղած Հայոց պատմ. համար կարևոր նիւթերն ու տեղեղեղեկութիւնները:

8) Բոլորը նիւթերը հաւաքել էջմիածնին և այնտեղ պամեն յարմարութիւն տալ այս գործով պարապող ձեռնհաս մարդկանց:

9) Սրա համար կազմել մի ընկերութիւն, կամ կազել այս գործը եղած ազգ. հիմնարկութիւններից մէկի հետ:

Եւ 10) Որովհետև այս ամենը երկար տարիների կատարելիք զործեր են՝ առանձին ուշք դարձնել ըստ կարելոյն շուտով տալու վերջին դարերի պատմութիւնը՝ հայերը Տաճկաստանում, հայկական գաղթականութիւնը և հայկական խնդիրը: Ապա թէ ընտրւեց մի յանձնաժողով, պ. պ. ակադեմիկ Մառ, պրոֆ.

Գարագաշ, պրոֆ., Վարդանեան, պրիւտատ-  
գոցենտ Ազոնց, պետ, խորհրդի անդամ  
Պ. Օ. Դուկասեան, պետ, դումայի անդամ  
Յովին. Սաղաթէլեան, իսկ, պետ, խորհրդա-  
կան Գր. Տիգրանեան, Սիր. Տիգրա-  
նեան, Նկարիչ Վ. Սուրէնեան և Պատ-  
կանեան:

Պատերուրդի խորհրդագը ի միջի այլոց  
արծարծել է էջմիածնի ճեմարանի լսա-  
րանները Հայագիտութեան Հայկական  
Ակադեմիա գարձնելու և գրական փոնդն  
էլ պատմագրական կամ հայագիտական  
ֆոնդի հետ միաժամանակ դնելու ինդի-  
րը, և այս խնդիրները աւելի պաշտպա-  
նութիւն գտան Մոսկայի հայ ինտելի-  
գենցիայի մի շրջանում, որը պատրաս-  
տում է Մոսկայի հայ գաղութն էլ ժողովի  
հրաւիրելու և Մոսկայի յոնձնաժողովն  
ընտրելու:

Այս էջմիածնի «Կենդրոնական յորելեա-  
նական յանձնաժողով»-ը նախագահու-  
թեամբ յայտնի բանասէր Միարանի (Պա-  
լուստ Տէր-Մկրտչեան) մինչև այժմ ու-  
նեցել է երեք նիստ, որի ընթացքում ե-  
ղել են մի շարք որոշումներ, որոնցից  
գլխաւորները սրանք են.

1) Ի նկատի առնելով, որ հայ տպա-  
գրութեան գիւտը սերտ կապ ունի տա-  
ռերի գիւտի հետ և կազմում է նրա շա-  
րունակութիւնը, իսկ տառերի գիւտի  
1500-ամեակը իր ժամանակին չէ տօն-  
ել պատշաճ կերպով, ուստի հայ տպա-  
գրութեան 400-ամեակը միացնել տառե-  
րի գիւտի 1500-ամեակի հետ:

2) Այդ հանդէսը տօնել առաջիկայ աշ-  
նանը Ս. Թարգմանչաց տօնի օրը և աշ-  
խատել որ այդ կատարի ըստ կարելոյն  
հայութեան բոլոր վայրերում միաժամա-  
նակ, դարձնելով տօնը ազգային. դպրո-  
ցական:

3) Աւելանալ եկեղեցական ծխական դպր-  
ոցական համագային փոնդ գրագիտու-  
թիւնը և ուսումն ընդհանրացնելու համար,  
ուսանայերի մասը կենդրանացած պէտք  
է լինի էջմիածնում, իսկ հայութեան միւս

մասերինը՝ իրենց համապատասխան  
կենդրոնավայրերում:

4) Հիմնել էջմիածնում համագային մի  
մատենագարան հայերէն բոլոր գրքերով,  
ձեռագրերով, հայագիտութեան վերաբե-  
րեալ հայ և օտար աշխատութիւններով:

5) Հայ տպագրութեան 400-ամեակի  
առթիւ էջմիածնը սկիզբ է զնում մի  
գիտական պարբերական հրատարակու-  
թեան, որի առաջին համարը նւիրւած  
պէտք է լինի ամբողջովին այդ տօնին և  
լոյս է տեսնելու այդ տօնի օրերին:

6) Տօնի առթիւ հրատարակելու է մի  
բրոշիր՝ երկու հանդէսների նշանակու-  
թիւնը լուսաբանելու, հանրամատչելի և  
ժողովրդական լեզուի, որը բաժանելու է  
բոլոր աշակերտներին: Այդ բրոշիրի հրա-  
տարակութեան համար նշանակելու է  
մրցանակ մինչև յունիսի վերջներք:

Հայ տպագրութեան 400-ամեակի բուն  
տօնակատարութեան ձեն ու բովանդա-  
կութիւնը կորոշւի նոյն յանձնաժողովի  
կողմից էջմիածնում առաջիկայ սեպահմ-  
բեր ամսին:

## ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

1. Խալսնդիայի դպրոցական նոր  
կանոնադրութիւնը: 1912 թ. յունուարի  
1-ից սկսուեց գործադրուել Խալսնդիայի  
դպրոցական նոր կանոնադրութիւնը, որ  
կամաք է մտցնում մի քանի նորութիւն-  
ներ: Նոր օրէնքով մասունքների ուսուց-  
ման գործը մինչև 10 տարեկան հասակը՝  
ամբողջովին թողնում է ընտանիքի հո-  
գացողութեանը. երեխաները միայն 10  
տարեկանից մինչև 14 տարեկան հասակը  
պարտաւոր են յաճախել ժողովրդական  
տարրական դպրոց: Դպրոց մտնելու հա-  
մար պահանջնում է, որ երեխաներն ի-  
մանան կարգալ և զբակ: Ուսումը ձրի է.  
ուսուցումն առ սակաւն վեց ամիս տևո-  
ղութիւն պէտք է ունենայ տարուայ ըն-  
թացքում: Դասերին ըացակայող աշա-  
կերաները դրամական տուգանքի են են-  
թարկում (50 կոպ. սկսած մինչև 12  
ըուբլի): 1880 թ. օրէնքով դպրոցական